Հավելված N 2
ՀՀ քաղաքաշինության նախարարի
2015 թվականի մայիսի 20-ի
N 114 հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

ՏԵՍՉԱԿԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

N 03

ՀՀ Սյունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչությունում կատարած տեսչական ստուգման արդյունքների մասին

« 18» հուլիսի 2016թ.

ք. Կապան

ք. Երևան

Ի կատարումն ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 12-ի "Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին" N 624 որոշման, ՀՀ քաղաքաշինության նախարարի 2016 թվականի ապրիլի 5-ի "Հայաստանի Հանրապետության մարզպետարաններում տեսչական ստուգումներ անցկացնելու մասին" N 62-Ա հրամանով հաստատված ժամանակացույցի և ՀՀ քաղաքաշինական պետական գլխավոր տեսուչի 2016 թվականի հուլիսի 11-ի N 03 տեսչական ստուգման հանձնարարագրի, ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության հանձնախումբը հետևյալ կազմով՝

Կ.Նավասարդյան - քաղաքաշինական պետական տեսչության նորմատիվատեխնիկական և քաղաքաշինական փաստաթղթերի վերահսկողության բաժնի պետ - հանձնախմբի ղեկավար,

Ա. Հարությունյան - քաղաքաշինական պետական տեսչության նորմատիվատեխնիկական և քաղաքաշինական փաստաթղթերի վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ - հանձնախմբի անդամ,

Մ. Միրզոյան - քաղաքաշինական պետական տեսչության նորմատիվատեխնիկական և քաղաքաշինական փաստաթղթերի վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ - հանձնախմբի անդամ,

քաղաքաշինական պետական տեսչության Սյունիքի տարածքային բաժնի պետ Լ. Ներսիսյանի և մարզպետարանի ներկայացուցիչ՝ քաղաքաշինության վարչության պետ Ռ. Ավետիսյանի մասնակցությամբ, 2016 թվականի հուլիսի 11-ից 15-ը տեսչական ստուգում է անցկացրել ՀՀ Սյունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչությունում:

Տեսչական ստուգումն ընդգրկում է 2015 թվականի հուլիսի 13-ից մինչև 2016 թվականի հուլիսի 11-ը ընկած ժամանակահատվածը:

Ստուգման ընթացքում ըստ հանձնարարագրի ուսումնասիրվել են՝

1. Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի փոփոխության կամ բացակայության դեպքում, ինչպես նաև քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում մարզի համայնքներից մարզպետարան համաձայնեցման ներկայացված հողահատկացման, տարածքների նպատակային կամ գործառնական նշանակության փոփոխման առաջարկությունների, ճարտարապետահատակագծային առաջադրանքների ու նախագծերի համաձայնեցման գործընթացների համապատասխանությունը ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգերի պահանջներին:

2. Շինարարության և քանդման թույլտվությունները մարզի համայնքներից մարզպետարան ներկայացնելու գործընթացի, ինչպես նաև ներկայացված շինարարության և քանդման թույլտվությունների համապատասխանությունը ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգի պահանջներին:

3. Ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտերը մարզի համայնքներից մարզպետարան ներկայացնելու գործընթացի, ինչպես նաև ներկայացված ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտերի համապատասխանությունը ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգի պահանջներին:

4. Վարչական հսկողության գործընթացի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

5. Քաղաքաշինական գործունեությանն առնչվող այլ գործընթացների համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

Ստուգման ընթացքում պարզվել է՝

1. Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի փոփոխության կամ բացակայության դեպքում, ինչպես նաև քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում մարզի համայնքներից մարզպետարան համաձայնեցման ներկայացված հողահատկացման, տարածքների նպատակային կամ գործառնական նշանակության փոփոխման առաջարկությունների, ճարտարապետահատակագծային առաջադրանքների ու նախագծերի համաձայնեցման գործընթացների համապատասխանությունը ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգերի պահանջներին

ՀՀ Սյունիքի մարզի թվով 109 համայնքից գլխավոր հատակագիծ ունի միայն 7-ը՝ Կապան, Սիսյան, Գորիս, Մեղրի, Ագարակ, քաղաքները և Տաթև, Նռնաձոր, համայնքները:

Ստուգման ենթակա ժամանակահատվածում, ըստ մարզպետարանի կողմից տրամադրված նյութերի, մարզի համայնքներից համաձայնեցման նպատակով ՀՀ Սյունիքի մարզպետարան է ներկայացվել հողահատկացման, հողային ֆոնդի նպատակային նշանակության փոփոխման, տարածքների գործառնական նշանակության փոփոխման, ՃՀԱ-ների ու նախագծերի համաձայնեցման 57 առաջարկ, այդ թվում՝ ք. Կապանից և ք. Քաջարանից՝ 6-ական, ք. Սիսիանից՝ 5, Լեռնաձորից և Գորիսից՝ 4-ական, ք. Ագարակից՝ 3, Անգեղակոթից, Շաքիից, Վերիշենից, Շինուհայրից և Վաղատինից երկուական, Սյունիքից, Դարբասից, Վ. Խոտանանից, Ծղուկից, Գորայքից, Սալվարդից, Գեղանուշից, Ալվանքից, Աղիտուից, Ույծից, Ծավից, Խոտից, Լիճքից, Տոլորսից, Արծվանիկից, Ճակտենից, Նժդեհից, Լեհվազից և գ. Ագարակից՝ մեկական:

30 համայնքի կողմից ներկայացված 57 առաջարկությունից 33-ը վերաբերում է հողամասերի նպատակային, 24-ը՝ գործառնական նշանակության փոփոխություններին և ՃՀԱ-ների ու նախագծերի համաձայնեցմանը:

Հողերի նպատակային նշանակության փոփոխման գործառույթներով ամբողջությամբ զբաղվել է ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչությունը, չնայած այն հանգամանքիին, որ այն որպես քաղաքաշինական խնդիրների լուծման գործառույթ և բաղադրիչ ընթացակարգ, ներառված է քաղաքաշինության վարչության կանոնադրական իրավասությունների շրջանակում:

Հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունների մասին թվով 33 առաջարկության՝ ք. Ագարակից 3, ք. Կապանից, ք. Սիսիանից, Լեռնաձորից, Վաղատինից և Անգեղակոթից՝ երկուական, ք. Գորիսից, Շաքիից, Ալվանքից, Աղիտուից, Շինուհայրից, Ույծից, Ծավից, գ. Ագարակից, Խոտից, Լիճքից, Տոլորսից, Արծվանիկից, Ճակտենից, Նժդեհից, Լեհվազից, Սյունիքից, Դարբասից, Վ.Խոտանից, Ծղուկից, և Գորայքից՝ մեկական, հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջներին համապատասխան, 24 առաջարկի՝ տվել է դրական եզրակացություն: Թվով 9-ը առաջարկ՝ (ք. Կապաննից 2, Լեռնաձոր, Սյունիք, Դարբաս, Վ. Խոտանան, Անգեղակոթ, Ծղուկ և Գորայք՝ համայնքներից մեկական) հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից ուսումնասիրության ընթացքում է:

Հողամասերի գործառնական նշանակության փոփոխությունների համաձայնեցման նպատակով ներկայացված թվով 24 առաջարկություն, այդ թվում՝ Քաջարանից՝ 6, Կապանից՝ 4, Գորիսից և Սիսիանից՝ երեքական, Լեռնաձորից և Վերիշենից՝ երկուական, Շինուհայրից, Գեղանուշից, Սալվարդից, և Շաքիից մեկական, սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ Սյունիքի մարզպետարան:

Քաջարանից ներկայացված 6 առաջարկից 5-ը (0.0020հա, 0.0020հա, 0.0020հա, 0.0020հա բնակավայրերի բնակելիից փոխադրելու հասարակական կառուցապատման և 0.0026հա ընդհանուր օգտագործման հողամասը բնակելի կառուցապատման փոխելու) համաձայնեցվել է ՀՀ Սյունիքի մարզպետարանի կողմից, իսկ մեկ առաջարկ (0.0040հա բնակավայրերի այլ հողատեսքից փոխադրելու բնակելի կառուցապատման) ՀՀ Սյունիքի մարզպետարանի կողմից ուսումնասիրության ընթացքում է: Քաջարանից ուղարկված և մարզպետի կողմից համաձայնեցված փաթեթներում ՃՀԱ-ի ձևաթղթերը լրացված էր թերի՝ բացակայում էր շինարարական նյութերի վերաբերյալ պահանջը, հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջացառումները:

Կապանից ներկայացված 4 առաջարկից երկուսը (0.0022հա և 0.0173հա բնակավայրերի բնակելիից փոխադրելու հասարակական կառուցապատման) համաձայնեցվել է ՀՀ Սյունիքի մարզպետարանի, սակայն մերժվել ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից՝ համաձայն ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2404-Ն և ՀՀ կառավարության 6.08.2009թ. թիվ 968-Ա որոշումների: Մեկ առաջարկ (0.1164հա Ողջի գետի միջանկյալ հատվածում հասարակական կառուցապատման) համաձայնեցվել է ՀՀ Սյունիքի մարզպետարանի, սակայն մերժվել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից՝ համաձայն ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2404-Ն որոշման: Իսկ մյուս մեկ առաջարկը (0.00601հա բնակավայրեի հյլից փոխադրելու բնակելի կառուցապատման), հետ է վերադարձվել համայնք՝ համաձայն ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ մարզպետարանի և ՀՀ քաղաքաշինության նախարարության համաձայնեցման անհրաժեշտություն չլինելու պատճառով:

Գորիսից ներկայացված 3 առաջարկից մեկը (0.01365հա բնակելիից փոխադրելու հասարակական կառուցապատման), սահմանված կարգով համաձայնեցվել է ՀՀ Սյունիքի մարզպետարանի և ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից, իսկ երկուսը (0.0240հա և 0.02295հա բնակելիից փոխադրելու հասարակական կառուցապատման) մերժվել և հետ է վերադարձվել համայնք՝ համաձայն ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2404-Ն և ՀՀ կառավարության 6.08.2009թ. թիվ 968-Ա որոշումների:

Սիսիանից ներկայացված 3 առաջարկից երկուսը (0.3693հա և 0.1000հա բնակելիից փոխադրելու հասարակական կառուցապատման), սահմանված կարգով համաձայնեցվել է ՀՀ Սյունիքի մարզպետարանի և ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից, իսկ մեկը (0.1500հա բնակելիից փոխադրելու հասարակական կառուցապատման) հետ է վերադարձվել

համայնք՝ համաձայն ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ մարզպետարանի և ՀՀ քաղաքաշինության նախարարության համաձայնեցման անհրաժեշտություն չլինելու պատճառով:

Լեռնաձորից ներկայացվել է 2 առաջարկ, որից 1-ը (0.0103հա բնակավայրերի այլից փոխադրելու հասարակական կառուցապատման) սահմանված կարգով համաձայնեցվել է ՀՀ Սյունիքի մարզպետարանի կողմից, իսկ մյուսը (0.00822հա բնակավայրի ընդհանուր օգտագործման հողամասը փոխադրելու հասարակական կառուցապատման) ՀՀ Սյունիքի մարզպետարանի կողմից ուսումնասիրության ընթացքում է: Լեռնաձորից ուղարկված և մարզպետի կողմից համաձայնեցված փաթեթում ՃՀԱ-ի ձևաթուղթը լրացված էր թերի՝ բացակայում է կառուցապատման խտությունը, հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումները:

Վերիշենից ներկայացված 2 առաջարկ (0.1042հա և 0.04013հա բնակավայրերի այլ հողատեսքերից փոխադրելու բնակելի կառուցապատման) սահմանված կարգով համաձայնեցվել է ՀՀ Սյունիքի մարզպետարանի կողմից:

Շաքիից ներկայացված մեկ առաջարկ (0.01հա մեկ հարկանի ինքնակամ կառույցը օրինականացնելու) ՀՀ Սյունիքի մարզպետարանի կողմից մերժվել և հետ է վերադարձվել համայնք: ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխանեցնելու պահանջով:

Սալվարդից ներկայացված մեկ առաջարկ (0.2850հա բնակավայրերի այլ հողատեսքից փոխադրելու բնակելի կառուցապատման) ՀՀ Սյունիքի մարզպետարանի կողմից ուսումնասիրության ընթացքում է:

Գեղանուշից ներկայացված մեկ առաջարկ (0.05912հա բնակավայրերի այլ հողատեսքից փոխադրելու բնակելի կառուցապատման) սահմանված կարգով համաձայնեցվել է ՀՀ Սյունիքի մարզպետարանի կողմից: Գեղանուշից ուղարկված փաթեթում ՃՀԱ-ի ձևաթուղթը չի համապատասխանում սահմանված կարգին, լրացված էր թերի՝ բացակայում էր նախագծային պահանջները:

Շինուհայրից ներկայացված մեկ առաջարկ (0.02հա բնակավայրերի այլ հողատեսքից փոխադրելու բնակելի հասարակական) ՀՀ Սյունիքի մարզպետարանի կողմից մերժվել և հետ է վերադարձվել համայնք: ՀՀ կառավարության 26.07.2009թ. թիվ 792-Ն որոշմամբ հաստատված կարգին չհամապատասխանելու պահանջով:

Ստուգման ենթակա ժամանակահատվածում ՀՀ Սյունիքի մարզի համայնքներից ներկայացված հողային ֆոնդի նպատակային նշանակության փոփոխության, հողհատկացման, տարածքների գործառական նշանակության փոփոխությունների և ՃՀԱ-ների ու նախագծերի համաձայնեցման գործառույթները ՀՀ Սյունիքի մարզպետարանի կողմից հիմնականում իրականացվել են սահմանված կարգերին համապատասխան: Մեծաքանակ են մարզպետարանի կողմից մերժված ու լրամշակման վերադարձված առաջարկները, որոնք հիմնականում պայմանավորված են փաստաթղթային փաթեթների ոչ լրակազմ ներկայացման և գործող կարգերի պահանջներին անհամապատասխանության ու թերի մշակման հանգամանքներով:

2. Շինարարության և քանդման թույլտվությունները մարզի համայնքներից մարզպետարան ներկայացնելու գործընթացի, ինչպես նաև ներկայացված շինարարության և քանդման թույլտվությունների համապատասխանությունը ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգի պահանջներին

Ստուգման ենթակա ժամանակահատվածում ՀՀ Սյունիքի մարզի 109 համայնքից մարզպետարան է ուղարկվել 107 շինարարության թույլտվության պատճեն: Այդ թվում՝ Կապանից՝ 39, Սիսիանից՝ 22, Գորիսից՝ 10, Մեղրիից՝ 6, Լեռնաձորից՝ 4, Ագարակից, Վերիշենից և Շաքիից՝ 3-ական, Քաջարանից, Ալվանքից, Գեղանուշից, Լեհվազից և Սյունիքից՝ 2-ական, Կարճևանից,

Քարահունջից, Խոտից, Լիճքից, Վերին Խոտավանից, Արծվանիկից և Դարբասից մեկական: Մարզպետարան է ուղարկվել 4 քանդման թույլտվություն, այդ թվում՝ Քաջարանից՝ 3 և Կապանից մեկ:

Շինարարության թույլտվությունները համայնքների մեծ մասում լրացված են ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ սահմանված կարգի խախտումներով: Այսպես՝ Կապանում 2015 թվականի N20 շինարարության թույլտվությունում բացակայում է փորձաքննության եզրակացության համարը, Սյունիքում 2016 թվականի N 1, 2 շինարարության թույլտվություններում չի լրացված օբյեկտի ռիսկայնությունը, հիմնական ցուցանիշները: Լեհվազում, Շաքիում, Դարբասում, Վերիշենում առկա են թույլտվություններ, որոնցում լրացված չեն շինարարության վարման մատյան տրամադրելու մասին գրառումները: Վերիշենում 2016 թվականի N1 շինարարության թույլտվությունում չի նշված կապալառու կազմակերպության լիցենզիայի համարը: Լեհվազում և Խոտում տրվել են թույլտվություններ չհամապատասխանող ձևաթղթերով:

Մեղրիից՝ 6, Գորիսից՝ 3, Ագարակից՝ 2, Լեհվազից, Խոտից և Քարահունջից՝ մեկական շինարարության, իսկ Կապանից մեկ քանդմքան թույլտվությունների պատճեններ մարզպետարան են ուղարկվել 3-օրյա ժամկետի խախտումով:

Ըստ հերթական համարների ուսումնասիրության՝ մարզի 2 համայնքից մարզպետարան չի ուղարկվել ընդհանուր հաշվով առնվազն 2, այդ թվում՝ Գորիսից (2016թ. N1) և Լեհվազից՝ (2016թ. N1) մեկական շինարարության թույլտվության պատճեն:

3. Ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտերը մարզի համայնքներից մարզպետարան ներկայացնելու գործընթացի, ինչպես նաև ներկայացված ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտերի համապատասխանությունը ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգի պահանջներին

Ստուգման ենթակա ժամանակահատվածում ՀՀ Սյունիքի մարզի 109 համայնքից մարզպետարան է ուղարկվել ավարտված շինարարության շահագործման փաստագրման 62 ակտ, այդ թվում՝ կապանից՝ 20, Լեռնաձորից՝ 16, Գորիսից և Քաջարանից՝ 6-ական, Ագարակից և Խնածախից՝ 3-ական, Խոտից՝ 2, Խոզնավարից, Վերին Խոտավանից, Սպանդարյանից, Ծղուկից, Սառնակունքից և Գեղանուշից՝ մեկական:

Ըստ հերթական համարների ուսումնասիրության՝ մարզպետարան են ուղարկվել ավարտված շինարարության շահագործման փաստագրման բոլոր ակտերի պատճենները:

Քաջարանից՝ 5, Խնածախից՝ 3, Խոզնավարից, Սպանդարյանից և Ծղուկից՝ մեկական ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտ մարզպետարան է ուղարկվել առանց ուղեկցող գրության:

Եռօրյա ժամկետի խախտումով մարզպետարան են ուղարկվել Գորիսից՝ 5 (2016թ. N1, 2, 3, 4, 5), Ագարակից (2016թ. N1) և Գեղաշենից՝ (2016թ. N1) մեկական ակտերի պատճեններ: Խոզնավարից տրված 2015 թվականի N1 ակտում չի նշված կառուցապատողի դիմումի մասին, իսկ Խոտից տրված 2016 թվականի N2 ակտում չկան գրառումներ կատարողական փաստաթղթերի մասին, ինչը հանդիսանում է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգի խախտում:

4. ՀՀ վարչական հսկողության գործընթացի համապատասխանությունը օրենսդրությանը

ՀՀ Սյունիքի մարզպետարանը համայնքների քաղաքաշինական գործունեության վերահսկողությունն իրականացրել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ

նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրով և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2014 թվականի դեկտեմբերի 27-ի «Վարչական հսկողության 2015 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» N282-Ա հրամանով սահմանված կարգով, ինչպես նաև համաձայն ՀՀ Սյունիքի մարզպետի 2015 թվականի փետրվարի 9-ի N12-Ա և 2016 թվականի փետրվարի 10-ի N13-Ա «ՀՀ Սյունիքի մարզի համայնքներում վարչական հսկողություն իրականացնելու մասին» որոշումների:

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարների 2014 թվականի դեկտեմբերի 27-ի N282-Ա և 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N1381-Ա «Վարչական հսկողության աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» հրամանների, ՀՀ Սյունիքի մարզի համայնքներում 2015 թվականի երրորդ, չորրորդ և 2016 թվականի առաջին, երկրորդ եռամսյակների ընթացքում վարչական հսկողություն պետք է իրականացվեր մարզի 109 համայնքներից 35-ում (Գորիս, Ագարակ, Ծղուկ, Հացավան, Շինուհայր, Խոտ, Դաստակերտ, Նժդեհ, Քաշունի, Թանահատ, Արավուս, Կաղնուտ, Շաղատ, Տորունիք, Ձորաստան, Հարթաշեն, Շաքի, Տեղ, գ. Ագարակ, Ծավ, Գեղի, Ներքին Հանդ, Աղվանի, Նոր Աստղաբերդ, Գեղանուշ, Լեռնաձոր, Աշոտավան, Գորայք, Քարահունջ, Վերիշեն, Խնածախ, Բարձրավան, Ներքին Խնձորեսկ, Որոտան և Քարաշեն):

Ստուգման պահին, ՀՀ Սյունիքի մարզի 35 համայնքներում նախատեսված վարչական հսկողություն իրականացնելու գործընթացն ավարտված էր:

Համայնքներում անցկացված քաղաքաշինության ոլորտի վարչական հսկողության հարցաշարերի պատասխանների հիման վրա կազմվել են համապատասխան արձանագրություններ, որոնք սահմանված կարգով հրապարակվել են ՀՀ Սյունիքի մարզպետարանի պաշտոնական ինտերնետային կայքում (http://syunik.mtaes.am) և ուղարկվել ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն:

Այդուհանդերձ, մարզպետարանի կողմից ՀՀ Սյունիքի մարզի 35 համայնքերում անցկացված քաղաքաշինության ոլորտի վարչական հսկողության հարցաշարերի պատասխաններից պարզվել է հետևյալը.

Հողահատկացման գործընթաց.

Բացառությամբ Գորիսից, մարզի 34 համայնքերը չունեն գլխավոր հատակագիծ, գոտևորման նախագիծ, քաղաքաշինական կանոնադրություն:

Կառուցապատման նպատակով հողամասեր են տրամադրվել Գորիսում՝ 24, Դաստակերտում և Ագարակում՝ 2-ական, Ծղուկում և Գետաշենում՝ մեկական: Նպատակային և գործառնական փոփոխություններ են իրականացվել Գորիսում՝ 5, Ագարակում և Վերիշենում՝ 3-ական, Լեռնաձորում՝ մեկ հողամասի: Մնացած համայնքներում գործառույթ չի իրականացվել:

Ճարտարապետա-հատակագծային առաջադրանքների /ՃՀԱ-ների/ տրամադրման գործընթաց.

Գորիսում՝ 44, Լեռնաձորում՝ 6, Շաքիում՝ 5, Ագարակում և Գորայքում՝ 4-ական, Խոտում՝ 3, Ծղուկում, Դաստակերտում, Վերիշենում և Խնածախում՝ 2-ական, Շինուհայրում, Տորունիքում, Գեղանուշում, Քարահունջում և Քարաշենում՝ մեկական ճարտարապետա-հատակագծային առաջադրանք տրվել է սահմանված կարգով:

Վարչական հսկողություն իրականացված մնացած համայնքներում ճարտարապետա-հատակագծային առաջադրանք չի տրվել:

Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման գործընթաց.

Համայնքներում անցկացված քաղաքաշինության ոլորտի վարչական հսկողության հարցաշարերի պատասխանների հիման վրա իրազեկման գործընթացը պահպանված է Գորիսում,

Լեռնաձորում, Շաքիում, Գորայքում, Խոտում, Ծղուկում, Դաստակերտում, Վերիշենում Խնածախում, Շինուհայրում, Գեղանուշում, Տորունիքում, Քարահունջում և Քարաշենում:

Մնացած համայնքներում գործառույթ չի իրականացվել:

Նախագծային փաստաթղթերի համաձայնեցման գործընթաց

Մարզի համայնքների ղեկավարների կողմից մարզպետարան համաձայնեցման է ներկայացվել տարբեր նշանակության թվով 72 օբյեկտի, այդ թվում՝ Գորիսից՝ 32, Ագարակից՝ 8, Լեռնաձորից, Շաքիից և Վերիշենից՝ 5-ական, Խոտից և Դաստակերտից՝ 3-ական, Ծղուկից, Գորայքից և Խնածախից՝ 2-ական, Շինուհայրից, Գեղանուշից, Տորունիքից, Քարահունջից և Քարաշենից՝ մեկական նախագծային փաստաթղթեր:

Ստուգված մնացած համայնքներում նախագծեր չեն համաձայնեցվել:

Շինարարության /քանդման/ թույլտվությունների տրամադրման գործընթաց.

Համայնքներում անցկացված քաղաքաշինության ոլորտի վարչական հսկողության հարցաշարերի պատասխանների հիման վրա տրվել է 72, այդ թվում՝ Գորիսից՝ 32, Ագարակից՝ 8, Լեռնաձորից, Շաքիից և Վերիշենից՝ 5-ական, Խոտից և Դաստակերտից՝ 3-ական, Ծղուկից, Գորայքից և Խնածախից՝ 2-ական, Շինուհայրից, Գեղանուշից, Տորունիքից, Քարահունջից և Քարաշենից՝ մեկական շինարարության թույլտվություն:

Ստուգված մնացած համայնքներում շինարարության կամ քանդման թույլտվություններ չեն տրամադրվել:

Ծղուկ, Շինուհայր, Տորունիք, Շաքի համայնքուներում շինարարության թույլտվությունները տրամադրվել են սահմանված կարգի խախտումով՝ դրանք 3-օրյա ժամկետում չեն ներկայացվել քաղաքաշինական պետական տեսչություն:

Մարզի ստուգված մնացած համայնքներում շինարարության թույտվության տրամադրման կարգի դրույթները պահպանվել են, այն դեպքում՝ երբ մարզպետարանում առկա շինարարության թույլտվությունների ուսումնասիրության տվյալներով առկա են տարբեր բնույթի խախտումներ, ինչը սահմանված կարգի խախտում է:

Ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտերի տրամադրման գործընթաց.

Համայնքներում անցկացված քաղաքաշինության ոլորտի վարչական հսկողության հարցաշարերի պատասխանների հիման վրա տրամադրվել է թվով 33, այդ թվում՝ Լեռնաձորից՝ 19, Ագարակից՝ 6, Գորիսից և Խնածախից՝ 3-ական, Շաքիից և Վերիշենից՝ մեկական ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտ:

Ստուգված մնացած համայնքներում ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտեր չի տրվել:

Շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակությունները փոփոխման գործընթաց.

Գորիսից շենքերի-շինությունների գործառնական նշանակության փոփոխման 5 դեպք է ներկայացվել մարզպետարան:

Ստուգված մնացած համայնքներում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակություն չի փոփոխվել:

Ինքնակամ շինարարության կանխարգելման, կասեցման և հետևանքների վերացման գործընթաց.

Լեռնաձորում՝ 8 և Ձորաստանում՝ 3 ինքնակամ շինարարության դեպք է կասեցվել, կան նշումներ ինքնակամ շինարարության հետևանքների վերացման վերաբերյալ:

Ստուգված մնացած համայնքներում ինքնակամ շինարարության դեպքեր չեն հայտնաբերվել:

5. Քաղաքաշինական գործունեությանն առնչվող այլ գործընթացների համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից, մարզի համայնքների ղեկավարների կողմից խախտումներով տրամադրված քաղաքաշինական փաստաթղթերի վերաբերյալ՝ քաղաքաշինական պետական տեսչության համապատասխան հաղորդումների հիման վրա 09.10.2015թ. մարզխորհրդի նիստում, համայնքների ղեկավարների հետ քննարկվել է տեսչական ստուգման արդյունքում արձանագրված թերությունները և հանձնարարվել համայնքների ղեկավարներին՝ պահանջելով քաղաքաշինական փաստաթղթերը տրամադրել սահմանված կարգերին համապատասխան:

Ստուգման ենթակա ժամանակահատվածում ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից ուսումնասիրվել է մարզի համայնքներում քաղաքաշինական գործունեությանն առնչվող թվով 1117 գրություն և դիմում, այդ թվում՝ ՀՀ նախագահի աշխատակազմից՝ 10, ՀՀ կառավարության աշխատակազմից՝ 107, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունից՝ 156, ՀՀ քաղաքաշինության նախարարությունից՝ 49, այլ նախարարություններից՝ 107, մարդու իրավունքների պաշտպանից՝ 1, այլ կազմակերպություններից՝ 151, հասարարական կազմակերպություններից 3, Ջրային տնտ. պետ. կոմիտեից՝ 1, մարզի համայնքներից՝ 439, քաղաքացիներից՝ 93, որոնք ստացել են համապատասխան ընթացք:

Ստուգման արձանագրությունը կազմեցին՝

Կ. Նավասարդյան

Ա. Հարությունյան

Մ.Միրզոյան

Մարզպետարանի ներկայացուցիչ՝

Ռ. Ավետիսյան